ՀԱՐՑԱՇԱՐ

ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

***(ԱՏԳԱԱ 9503 ծածկագրին համապատասխան)***

| NN ը/կ | Հարցը | Հարցի համար հիմք հանդիսացող իրավական նորմը | Ստուգման անցկացման մեթոդը | Կշիռը | Մեկնա-բանու-թյուններ | Պատասխան | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Այո | Ոչ | Չ/պ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1. | Արդյո՞ք, խաղալիքներն ուղեկցված են համապատասխանության նշանի մակնշմամբ, համապատասխանության սերտիֆիկատով կամ գրանցված համապատասխանության հայտարարագրով: | ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 7-րդ կետ, բացառությամբ՝ 35-րդ կետի | Փաստաթղ-թային, թեմատիկ (ծրագրային, կամ կրկնակի, կամ դիմում-բողոքի հիման վրա) | 10,0 | | | | |
| 2. | Արդյո՞ք, խաղալիքների կամ դրանց փաթեթվածքներին փակցված պիտակների վրա, ինչպես նաև օգտագործման հրահանգներում՝ խաղալիքների օգտագործման հետ կապված ռիսկի և դրա կանխման հնարավորության վերաբերյալ տրված են սպառիչ ցուցումներ: | ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 10-րդ կետ | տեսազննում | 5,0 | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3. | Արդյո՞ք, պահպանվում են խաղալիքների ներքոհիշյալ մեխանիկաֆիզիկական հատկությունները՝ | ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 11-րդ կետ | | | | | | |
| 3.1 | խաղալիքների վրա առկա անկյունները, դուրս ցցված մասերը, լարերը, մալուխները և կապերը նախագծված են այնպես, որ հպման դեպքում վնասվածք ստանալու ռիսկը հասցվի նվազագույնի. | բ) ենթակետ | տեսազննում, փորձա-քննություն | 1,0 | | | | |
| 3.2 | խաղալիքները նախագծված և արտադրված են այնպես, որ նրանց բաղկացուցիչ մասերի շարժման հետ կապված վնասվածք ստանալու ռիսկը հասցվի նվազագույնի. | գ) ենթակետ | տեսազննում, փորձա-քննություն | 0,5 | | | | |
| 3.3 | մինչև 3 տարեկան երեխաների համար հատուկ նախատեսված խաղալիքները, դրանց բաղկացուցիչ մասերը, ինչպես նաև հեշտությամբ առանձնացվող տարրերը բավական մեծ չափերի են, որպեսզի երեխան չկարողանա դրանք կուլ տալ և (կամ) դրանք չընկնեն նրա շնչառական ուղիները. | դ) ենթակետ | տեսազննում, փորձա-քննություն | 1,0 | | | | |
| 3.4 | խաղալիքները, դրանց բաղկացուցիչ մասերը և մանրածախ վաճառքի նպատակով փաթեթավորման համար | ե) ենթակետ | տեսազննում, փորձա-քննություն | 2,0 | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | օգտագործվող նյութերը բացառում են շնչահեղձության վտանգը. | | | | | | | |
| 3.5 | այն խաղալիքների, որոնք նախատեսված են աննշան խորությամբ ջրավազաններում երեխային ջրի մակերեսին պահելու համար, նախագծման և արտադրման ժամանակ հաշվի են առնվել դրանց՝ նախատեսված օգտագործման հետ կապված լողունակության և երեխային հենարան ծառայելու հատկության ծառայելու հատկության կորստի ռիսկերը. | զ) ենթակետ | տեսազննում, փորձա-քննություն | 1,0 | | | | |
| 3.6 | խաղալիքները, որոնց մեջ կարող են մտնել երեխաները և որոնք փակ տարածություններ են, ունեն ներսից հեշտությամբ բացվող միջոց. | է) ենթակետ | տեսազննում, փորձա-քննություն | 1,0 | | | | |
| 3.7 | խաղալիքները, որոնց օգնությամբ երեխան կարող է տեղից տեղ շարժվել ունեն հնարավորության չափով խաղալիքներին հարմարեցված և դրանցով զարգացող կինեմատիկ էներգիային համապատասխանող արգելակման համակարգեր. | ը) ենթակետ | տեսազննում, փորձա-քննություն | 0,5 | | | | |
| 3.8. | Տաքացնող տարրեր պարունակող խաղալիքներն արտադրված են այնպես, որ՝ | ժ) ենթակետ | | | | | | |
| 3.8.1 | հպման դեպքում ցանկացած բաց մակերեսի տաքությունն այրվածքներ չառաջացնի. | ժ) ենթակետ, 2-րդ պարբերություն | տեսազննում | 1,0 | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3.8.2 | դրանց մեջ պարունակվող հեղուկը և (կամ) գազը, որոնք դուրս են մղվում խաղալիքներից չունեն դրանց օգտագործման համար անհրաժեշտ ջերմաստիճանի և ճնշման մակարդակներից բարձր արժեք, որոնք կարող են առաջացնել այրվածքներ կամ այլ ֆիզիկական վնասվածքներ: | ժ) ենթակետ, 3-րդ պարբերություն | փորձա-քննություն | 1,0 | | | | |
| 4. | Արդյո՞ք, պահպանվում են խաղալիքների դյուրավառության հետ կապված անվտանգության ներքոհիշյալ պահանջները՝ | ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 12-րդ կետ, 5-րդ կետ, 7-րդ պարբերություն | | | | | | |
| 4.1 | խաղալիքները չեն պարունակում վտանգավոր դյուրավառ տարրեր. | ա) ենթակետ | փորձա-քննություն | 2,0 | | | | |
| 4.2 | խաղալիքները, որոնք պարունակում են իրենց օգտագործման համար անհրաժեշտ, բայց վտանգավոր նյութեր և (կամ) պատրաստուկներ չեն պարունակում այնպիսի նյութեր կամ պատրաստուկներ, որոնք կարող են բոցավառվել ցնդող ոչ դյուրավառ հոսակորստի պատճառով. | բ) ենթակետ | փորձա-քննություն | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4.3 | խաղալիքները պայթունավտանգ չեն կամ չեն պարունակում այնպիսի տարրեր կամ նյութեր, որոնք դրանց օգտագործման ընթացքում կարող են դառնալ պայթունավտանգ. | գ) ենթակետ | փորձա-քննություն | 1,0 | | | | |
| 5. | Արդյո՞ք, պահպանվում են խաղալիքներին վերաբերող ներքոհիշյալ քիմիական պահանջները՝ | ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 13-րդ կետ | | | | | | |
| 5.1 | խաղալիքները նախագծված և արտադրված են այնպես, որ ըստ նշանակության օգտագործման ժամանակ չառաջացնեն առողջությանը վնասելու ռիսկ. | ա) ենթակետ, 1-ին պարբերություն | տեսազննում, փորձա-քննություն | 1,0 | | | | |
| 5.3 | խաղալիքները չեն պարունակում երեխաների առողջության համար վտանգավոր քանակության վտանգավոր նյութեր կամ պատրաստուկներ: | գ) ենթակետ | փորձա-քննություն | 2,0 | | | | |
| 6. | Արդյո՞ք, պահպանվում են խաղալիքներին վերաբերող ներքոհիշյալ էլեկտրական հատկությունները՝ | ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 14-րդ կետ,<br>5-րդ կետ,<br>5-րդ պարբերություն | | | | | | |
| 6.1 | էլեկտրական խաղալիքները չեն սնուցվում 24 Վ գերազանցող անվանական լարմամբ, իսկ խաղալիքների ոչ մի մասում չեն առաջանում 24 Վ գերազանցող լարում. | ա) ենթակետ, | փորձա-քննություն | 2,0 | | | | |
| 6.2 | խաղալիքների մանրակները, որոնք հպվում են կամ կարող են հպվել էլեկտրականության աղբյուրին, խաղալիքների մանրակներին, հոսանք հաղորդող մալուխները, հաղորդալարերը կամ հաղորդիչները չեն կարող հոսանահարման պատճառ դառնալ. | բ) ենթակետ | տեսազննում, փորձա-քննություն | 2,0 | | | | |
| 6.3 | էլեկտրական խաղալիքները նախագծված և արտադրված են այնպես, որպեսզի դրանց բոլորի բաց մակերեսների առաջացող առավելագույն ջերմաստիճանը օգտագործողներին այրվածքներ չպատճառի: | գ) ենթակետ | տեսազննում, փորձա-քննություն | 2,0 | | | | |
| 7. | Խաղալիքները, որոնք նախատեսված չեն 3 տարեկանից փոքր երեխաների օգտագործման և կարող են վտանգ ներկայացնել 3 տարեկանից փոքր երեխաների համար արդյո՞ք, ուղեկցված են հատուկ նախազգուշացմամբ՝ ,,Չի | ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի | տեսազննում | 1,0 | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | նախատեսված 3 տարեկանից փոքր երեխաների համար,, : | 18-րդ կետ, 1-ին պարբերություն | | | | | | |
| 8. | Երեխաների համար նախատեսված ձեռնասահնակները, կախովի ճոճանակները, ինչպես նաև մարզանքի օղերը, ճոճաձողերը, ճոպանները, համանման հարմարանքները և շրջանակի վրա ամրացված մարզագործիքները արդյո՞ք, ուղեկցված են օգտագործման հրահանգով : | ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 19-րդ կետ | տեսազննում | 1,0 | | | | |
| 9. | Արդյո՞ք, գործառնական խաղալիքների կամ դրանց փաթեթվածքի վրա զետեղված է՝ «Ուշադրություն. Օգտագործել միայն մեծահասակների հսկողության ներքո» մակագրությունը: | ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 20-րդ կետ, 1-ին պարբերություն, | տեսազննում | 0,5 | | | | |
| 9.1 | Արդյո՞ք, գործառնական խաղալիքներին կցված է դրանց հետ վարվելու վերաբերյալ ցուցումներ պարունակող օգտագործման հրահանգը: | կանոնակարգի 20-րդ կետ, 1-ին պարբերություն | տեսազննում | 0,5 | | | | |
| 9.2 | Արդյո՞ք, գործառնական խաղալիքները գտնվում են վաղ հասակի երեխաների համար անհասանելի տեղում: | կանոնակարգի 20-րդ կետ, 2-րդ պարբերություն | տեսազննում | 0,5 | | | | |
| 10. | Վտանգավոր նյութեր և պատրաստուկներ պարունակող խաղալիքների օգտագործման | ՀՀ կառավարության 2004 թվականի | տեսազննում | 0,5 | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հրահանգները արդյո՞ք, պարունակում են անհրաժեշտ ցուցումներ համապատասխան խաղալիքի վտանգավոր բնույթի և օգտվողների կողմից նախազգուշական միջոցների ձեռնարկման մասին: | նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 21-րդ կետ, ա) ենթակետ, 1-ին մաս | | | | | | |
| 10.1 | Արդյո՞ք, վտանգավոր նյութեր և պատրաստուկներ պարունակող խաղալիքով խաղալիս ծանր վնասվածք ստանալու դեպքում առաջին օգնություն ցույց տալու անհրաժեշտության մասին և ցուցումներ այն մասին, որ նման խաղալիքները պետք է գտնվեն վաղ հասակի երեխաների համար անհասանելի տեղում են: | ա) ենթակետ, 2-րդ մաս | տեսազննում | 0,5 | | | | |
| 11. | Արդյո՞ք, քիմիական խաղալիքների փաթեթվածքների վրա նշված է ,,Ուշադրություն, նախատեսված է միայն ______ տարեկանից մեծ երեխաների համար օգտագործել միայն մեծահասակների հսկողության ներքո,, մակագրությունը: | ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 21-րդ կետ, բ) ենթակետ | տեսազննում | 0,5 | | | | |
| 12. | Արդյո՞ք, երեխաների սահատախտակները և անվավոր չմուշկները, եթե դրանք վաճառվում են որպես մանկական խաղալիք, ուղեկցված է | ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշմամբ | տեսազննում | 0,5 | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ,,Ուշադրություն, անհրաժեշտ է օգտագործել պաշտպանիչ հանդերձանքով,, մակագրությամբ: | հաստատված կանոնակարգի 22-րդ կետ | | | | | | |
| 13. | Արդյո՞ք, ջրի վրա խաղալու համար նախատեսված խաղալիքները ուղեկցված են ,,Ուշադրություն, օգտագործել միայն ծանծաղուտ ջրավազանում մեծահասակների հսկողության ներքո,, մակագրությունը: | ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 23-րդ կետ, | տեսազննում | 0,5 | | | | |
| 14. | Արդյո՞ք, խաղալիքներ արտադրողի, մատակարարողի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից խաղալիքների և (կամ) դրանց փաթեթվածքների վրա երևացող տեղում հայերենով ընթեռնելի զետեղված են հետևյալ տեղեկությունները՝ | ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 24-րդ և 26-րդ կետեր | տեսազննում | | | | | |
| 14.1 | խաղալիքի անվանումը. | ա) ենթակետ | տեսազննում | 1,0 | | | | |
| 14.2 | արտադրողի անվանումը, ապրանքային նշանը (առկայության դեպքում) և գտնվելու վայրը. | բ) ենթակետ | տեսազննում | 1,0 | | | | |
| 14.3 | մինչև 3 տարեկան տարիքային հասցեագրումը՝ տարիքային պայմանանշանով. | գ) ենթակետ | տեսազննում | 1,0 | | | | |
| 14.4 | վտանգի մասին նախազգուշացումները և նախազգուշական միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ ցուցումները. | դ) ենթակետ | տեսազննում | 1,0 | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 14.5 | օգտագործման հրահանգի առկայությունը (անհրաժեշտության դեպքում). | ե) ենթակետ | տեսազննում | 1,0 | | | | |
| 14.6 | նորմատիվ փաստաթղթի նշագիրը, որի պահանջներին համապատասխան արտադրված են խաղալիքները (անհրաժեշտության դեպքում). | զ) ենթակետ | տեսազննում | 1,0 | | | | |
| 14.7 | երեխաների մարմնի քաշն իր վրա կրող խաղալիքների վրա լրացուցիչ մակնշված են խաղալիքների ծանրաբեռնվածության թույլատրելի մակարդակը: | ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 24-րդ կետ, 2-րդ պարբերություն | տեսազննում | 1,0 | | | | |
| 15. | Արդյո՞ք, փոքր կամ փոքր մանրակներից կազմված խաղալիքների մասին տեղեկությունները նշված են դրանց փաթեթվածքների, պիտակների կամ ներդիրների (թերթիկներ) վրա*:* | ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 25-րդ կետ | տեսազննում | 1,0 | | | | |

1. Խաղալիքների տեխնիկական կանոնակարգի 35-րդ կետի համաձայն խաղալիքներ չեն համարվում հետևյալ արտադրատեսակները՝

1) ամանորյա և այլ տոների զարդեր,

2) ճշգրիտ մասշտաբային մոդելներ՝ մեծահասակ կոլեկցիոներների համար,

3) սարքեր՝ նախատեսված խաղահրապարակներում խմբային խաղերի համար,

4) մարզական գույք,

5) ջրային մարզական գույք, խորջրյա հանդերձանք,
6) գեղազարդ խաղալիքներ և ազգային տարազով տեխնիկներ, ինչպես նաև համանման իրեր՝ մեծահասակ կոլեկցիոներների համար,
7) «մասնագիտական» խաղալիքներ՝ տեղադրված հանրային վայրերում (առևտրի կենտրոններում, կայարաններում, հրապարակներում),
8) գլուխկոտրուկներ՝ 500-ից ավելի մանրակներով,
9) օդաճնշական զենք,
10) հրագործական ապրանքներ և հարվածային պատիճներ՝ բացառությամբ խաղալիքների օգտագործման համար հատուկ նախատեսված հարվածային պատիճներից,
11) ինքնանետիչներ (սարքվածքներ՝ քարեր նետելու համար), ինչպես նաև ռետինե ժապավենի օգնությամբ նետվող խաղալիքներ,
12) մետաղյա ծայրապանակով նետերից նետվող ականներ,
13) էլեկտրավառարաններ, արդուկներ և այլ սարքեր, որոնց անվանական լարումը 24 Վ-ից ավելի է.
14) տաքացնող տարրեր պարունակող արտադրատեսակներ, որոնք նախատեսված են մեծահասակների հսկողության ներքո ուսումնական նպատակներով կիրառելու համար,
15) ներքին այրման շարժիչներով փոխադրամիջոցներ,
16) խաղալիքային մեքենաներ՝ շոգեշարժիչներով,
17) մարզական կամ ճանապարհորդական հեծանիվներ,
18) տեսախաղեր, որոնք միացված են 24 Վ-ից ավելի անվանական լարմամբ տեսաէկրանին,
19) ծծակներ՝ մանուկների համար,
20) հրազեն զենքի ընդօրինակումներ՝ նման օրինակին շատ նման,
21) մանկական զարդեր՝ ոչ թանկարժեք մետաղներից,
22) աղեղ՝ հրաձգության համար, որի երկարությունը չձգված վիճակում գերազանցում է 120 սանտիմետրը:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | «Այո» - այո, առկա է, համապատասխանում է, բավարարում է | v | | |
| 2 | «Ոչ» - ոչ, առկա չէ, չի համապատասխանում, չի բավարարում | | v | |
| 3 | «Չ/պ» - չի պահանջվում, չի վերաբերում | | | v |

Ստուգաթերթը լրացրեցին՝
պետական տեսուչ ________________ ____________________
ստորագրություն անուն, ազգանուն

պետական տեսուչ ________________ ____________________
ստորագրություն անուն, ազգանուն

________________ ____________________
ստորագրություն անուն, ազգանուն

ընկերության ղեկավար՝ ________________ ____________________
ստորագրություն անուն, ազգանուն

_____ ____________201 թ.